Ապագա
Հանդես

APAGA
Quarterly

Յայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies

Սպահանի համալսարանի հայագիտական բաժանմունք

ISSN 1682-5438

Համար 61, հունիս , 2015 թ.

No. 61, June 2015

ԱՊԱԳԱ No. Համար 61 (76) 2015 *APAGA*

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.apagaonline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն	-Հայագիտությունը Իրանի համալսարաններում. Սպահան -Հայաստան-Իրանի Իսլամական Հանրապետություն մշակութային փոխհարաբերությունները 1992-2013թթ
Անգլերեն	Ահ ու սարսափի իշխանություն-Թուրքեր
Պարսկերեն	Աղվանքի պատմության ժամանակագրություն

CONTENTS

Armenian	Armenian studies at the Iranian universities, Isfahan Iran-Armenia Cultural relations 1992-2013
English	A REIGN OF TERROR- The Turks
Persian	Chronology of Aran History (Caucasian Albania)

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 5000 ռիալ

Հայագիտությունը Իրանի Համալսարաններում եւ հայ ուսանողությունը

Դր. Էդ. Բաղդասարյան

Սպահանի համալսարանի գրական ֆաքուլտեի հայերենագիտական ճյուղ

Սպահանի համալսարանի գրական ֆաքուլտեի հայերենագիտական ճյուղի հիմնադրաման աշխատանքներն սկսվել են 1960*թ. դեկտեմբերին, Արիամեհր Շահնշահի հրամանով, իսկ ուսումնական աշխատանքները՝* 1961 *թ. հունվարին։*

Առաջին տասնամյակի ընթացքում շրջանավարտ են եղել 65 *հոգի։ Ավարտողների մեծ մասն այժմ պաշտոնավարում է իրանահայ ազգային դպրոցներում, մեծապես սատարելով մայրենի լեզվի ուսուցման եւ մեր դարավոր մշակույթի պահպանման նվիրական գործին։*

Ժամանակին այս ճյուղի վարիչն էր պր. Զավեն Դավթյանը։ Դասախոսներն էին՝ Հոգշ. Կ. Եղիշե վարդպ. Մանճիկյանը, պր. Արամ Երեմյանը, դոքտ. Հրանդ Ղուկասյնաը եւ օր. Ժյուլիետ Հակոբյանը, Ազատ Մաթյանը եւ նաեւ պր. Խաժակ Տեր Գրիգորյանը, Դր. Բալայանը եւ այլն։



Հայերենագիտական ճյուղի շենքը (նախնական)



Սպահանի համալսարանի հայագիտական ամբյունի նոր շենքը

Հայ Դասախոսներ.- *Հայոց լեզվի ճյուղի հաստատման թվականից մինչեւ այժմ, վերը հիշված դասախոսներից բացի պաշտոնավարել են նաեւ հետեւյալները. պարոնայք՝ Հայկ Աճեմյան, Վարդգես*

Հովհաննիսյան, Դոքտ. Հրանդ Ղուկասյան, Հովիկ Ալլահվերդյան, դոկտ Մեսրոպ Բալայան եւ օր. Ռոզի Ալեքսանդրյան։

Եղել են եւ կան նաեւ ոչ հայ լեզվի դասախոսներ, որոնց մեջ պետք է հաշվել նաեւ պրն. Ջավեն Դավթյանին։

Աւիլթից օգտվելով հիշատկենք, որ Սպահանի տարբեր մասնաճյուղերում եւս պաշտոնավարում են հայ դասախոսներ, որոնք են՝ դոքտ. Մեսրոպ Բալայան (հոգեբանութjուն), սոքտ. Սերոժ Գասպարյան (երկրագործական ճարտարագիտութjուն), դոքտ. Հերոս Ղուկասյան (Թեքթոնիք) եւ պր. Ջավեն Դավթյան (անգլերեն լեզու)[1]։

Հայերենագիտական ճյուղի համար կառուցվել է առանձին շենք՝ Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության հատկացրած գումարով։ (Ներքեւի նկարում)։

Սպահանի հայագիտական ճյուղը, Փարիզի Սորբոն համալսարանի հայագիտական ճյուղից հետո, 2-րդն է սփյուռքում, ուր շնորհվում է բակալավրի (պսակավորի տիտղոս՝ լիսանս կամ Բի. էյ.), որն ունի գիտական եւ իրավական նույն արժեքն, ինչ մյուս ճյուղերը։ Պետի հիշել, որ Սպահանի համալսարանի շրջանավարտները, օգտվելով իրենց դիպլոմից՝ կարող են մագիստրոս ընդունվել Փարիզի Սորբոնի կամ արտասահմանի այլ համալսարաններում։ Դոկտորայական եւ մագիստրոսի աստիճան ստացած ուսանողները, այսօր Իրանում եւ սփյուռքի զանազան գաղթօջախներում դասավանդում են հայկական դպրոցներում եւ կրթական բարձրագույն հաստատություններում։ Ուրախալի է նշել, որ Սպահանի հայագիտական համալսարանը ցարդ տվել է 100-ի հասնող շրջանավարտներ, իսկ այժմ ունի 55 ուսանող[2]։

Իրանի նախկին արքայի հրամանագիրը, ըստ երեւույթի, երբեք չհրատարակվեց, գուցե եւ այդպիսին գոյություն չի ունեցել եւ Շահի թույլտվությունը կրել է լոկ բանավոր հրահանգի բնույթ։ Ըստ իրանահայ ժրաջան եւ անվանի բանասեր Լ. Գ. Մինասյանի.

«Հակառակ մեր կատարած երկար պրպտումների, ինչպես եւ երկար հայերենի ճյուղի վարիչ պրն. Ջավեն Դավթյանի եւ խորհրդարանի պատգամավոր պրն. Սեւակ Սագինյանի օժանդակությանց, ցարդ մեզ հնարավոր չի եղել ձեռք բերել Արքայի հրամանագրի պատճենը կամ իմանալ նրա ճշգրիտ թվականը։ Մինչ այժմ գրված «22 դեկտեմբեր» թվականը հայտարարության թվականն է եւ ոչ թե հրամանագրի»[3]։

Սպահանի համալսարանի գրական ֆակուլտետի դեկանը սոքտ. Ամիր Աբբասը Ֆարուղին էր։ Հայերեն հին եւ նոր լեզուների նշանակությունը իրանագիտության համար դոքտ. Ֆարուղին կազմել է Պրոֆ. դոկտ. Հով. Հախնազարյանի հետ միասնաբար։Այդ մասին Դոկտեր Ֆարուղին պատմել է տողերիս գրողին։ Այդ զեկուցումը կրթական նախարարը ներկայացրել է Իրանի արքային[4]։

---

[1] - Րաֆֆի օրացույց. Թեհրան, 1972թ.։

[2] - Նայիրի օրացույց. Թեհրան, 1991թ.։

[3] - Նույն տեղում. էջ 3։

Սպահանի համալսարանին (եւ ոչ թե Թեհրանի կամ այլ համալսարանի) այդ մենաշնորհ տալու մեջ, երկու գլխավոր խնդիրներ ունեցել են իրենց անմիջական դերն ու ազդեցությունը։

Առաջին այն՝ որ Նոր-Ջուղան իր դարավոր անցյալով ու մշակութային կենտրոնով միակն է ամբողջ Իրանում, եւ երկրորդ՝ համալսարանի ժամանակի տեսուչ Դոքտ. Աբբաս Ֆարուղու հայասեր ու ջանադիր վերաբերմունքը։

Ինչքան հայերը խանդավառ, հակառակ դրան եղան նաեւ պարսիկ հայրենակիցներ, որ անգամ մամուլով բացասական արտահայտություններ ունեցան եւ ծիծաղելի գտան այս քայլը[5], որոնք ի հարկե որեւէ ազդեցություն չունեցան եղած որոշումի եւ տարված նպաստավոր աշխատանքների վրա։

Արիամեհր Արքայի այս գեղեցիկ քայլը, հարկ է չեշտել, որ պարսիկ մամուլի կողմից եւս լայն արձագանգ ստացավ եւ ընդհանրապես մտավորական դասի շրջանակում արժանացավ լավ ընդունելության։

Համալսարանի հայերեն լեզվի ճյուղին կապվող առաջին աշխատանքներն սկսվեցին 1960 թվականի դեկտեմբերի վերջերից, հրամանագրի ստորագրման թվականից անմիջապես հետո։ Այս առթիվ համալսարանի տեսչությունն իր առաջին կապն ստեղծեց Իրանա-Հնդկաստանի Հայոց Թեմական Խորհրդի հետ, 28 դեկտ. 1960թ. (7 դեյ 1339) համար 1372 գրությամբ. որի աջակցության շնորհիվ Ջուղայի երիտասարդ-ուհիներից որպես ուսանող արձանագրվում են 14 հոգի, որոնց մուտքի քննությունը տեղի է ունենում 1961 թվականի հունվար 19-ին[6], իսկ դասերը, համաձայն համալսարանի 10 բահման 1339թվականի համար 1508 ծանուցման, սկսվում են 1961 թվականի փետրվար 5-ին, հատուկ ծրագրով ու հարմար դասախոսներով[7]։

Սպահանի համալսարանի տնօրինությունը 1960թ. պաշտոնական գրությամբ դիմեց Էջմիածնին, Հայաստանի լուսավորության նախարարությանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտենին եւ մի շարք թերթերի խմբագրություններին՝ խնդրելով, որ նրանք իրենց հայագիտական ճյուղի գրադարանը հարստացնեն

---

[4] - ՊԲՀ. 1969թ. համար 3, էջ 263։

[5] - «Թեհրան Մոսավար» շաբաթաթերթ(պարսկերեն) . Մոնիր Թաբաթաբայի. 23 դեյ, 1339թ., համար 906։.

[6] - Դժբախտաբար անբարեխիղճ ձեռքեր, ուսանողների այս առաջին ցանկն ու որոշ փաստաթղթեր, անհետացրել են Թեմական Խորհրդին պատկանող համալսարանի թղթածրարի միջից։

[7] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 5։

գրքերով, հանդեսներով, եւ թերթերով։ Այդ դիմումները լայն արձագանք գտան Խորհրդային Հայաստանում։ Առաքավեցին ավելի քան քսան անուն հայերեն թերթ եւ հանդես, գիտական արժեք ներկայացնող գրքեր եւ այլն։ այնպես որ այդ գրադարանը 1971թ. ուներ շուրջ 1500 գրքեր[8]։

Հայոց լեզվի Ծրագիրը.- *Սկզբնական շրջանում համալսարանի հայոց լեզվի ճյուղը զուրկ էր մի հիմնական ու կանոնավոր ծրագրից, բայց հետո տարիների ընթացքում կազմվեց ու ամբողջացվեց, նման գրական ֆակուլտետի մյուս լեզուների ճյուղերին, տպագրվելով առանձին գրքում։*

Այդ ծրագրի մեջ, որ կրկին մասնակի փոփոխության է ենթարկվել, նյութի հետ միասին տրված են նաեւ օգտագործելիք կամ պարապվելիք գրականության ցանկը։ Սրանից բացի, առանձին մի գրքույկով, որ կրում է «Ուղեցույց Սպահանի Համալսարանի» խորագիրը, տրված են համալսարանի բոլոր բաժիններին ու ճյուղերին պատկանող գիտությունների մանրամասն ծրագրերը, իրենց պատկան դասախոսական ցանկերի հետ միասին, որոնց թվում նաեւ հայոց լեզվի ճյուղի ծրագիրը։

Մինչեւ 1964-65 թվականների տարեշրջանը, ճյուղն ավարտելու համար սովորում էին երեք տարի, բայց վերոհիշյալ թվականներից հետո, մեկ նախապատրաստական լսարան եւս ավելացավ դրա վրա, այնպես որ այժմ շրջանը պետք է ավարտել չորս տարվա ընթացքում։

Հայերենի ճյուղի երկրորդ լեզուն համարվել է պարսկերենը, իսկ երկրորդը՝ եվրոպական չորս՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ ռուսերեն լեզուներից որեւէ մեկը։ Այս լեզուներից սովորաբար պարապվել է անգլերենը։

1968-60 *տարեշրջանում հայոց լեզվի ծրագիրը կրկին փոխվելով կրճատվելով արաբերենը եւ նորից ավելացվելով հայոց պատմությունը, որ վերացվել էր, իսկ ճարտասանությունը ներառվեց այլ դասերի մեջ։*

Ա. լսարան
(*Նախապատրաստական*)

	լեզու	*ա. կիսամ.*	*բ. կիսամ.*
Պարսկերեն լեզվի քերականութ.	*պարսկերենով*	2 *միավոր*	2 *միավոր*
Պարսկերեն գրականություն	»	3 »	3 »
Պարսկերենի մշակույթի	»	1 »	1 »

---

[8] - *Հ. Փահլեւանյան. Իրանահայ համայնքը. Երեւան*, 1989 *թ., էջ* 211։

պատմութ.			
Հայերեն քերականություն	հայերենով	1 »	1 »
Հոգեբանություն	պարսկերոնով	2 »	2 »
Շարադրություն	հայերեն	1 »	1 »
Փիլիսոփայություն	պարսկերենով	4 »	4 »
Ընկերաբանություն	»	-	2 »
Անգլերեն	»	4 միավոր	4 »
Բանահյուսություն եւ նամակագրութ.	հայերենով	1 »	1 »
Թարգմանություն	հայերեն-պարսկ.	1 »	1 »
գումար՝		20 »	20 »

Բ. լսարան

	լեզու	Ա. կիսամյակ	Բ. կիսամյակ
Հայերեն քերականություն		2 միավոր	2 միավոր
Գրաբար		2 »	2 »
Լեզվաբանություն	պարսկերենով	2 »	2 »
Շարադրություն	հայերենով	2 »	2 »
Թարգմանություն	հայ-պարսկ.	2 »	2 »
Անգլերեն		2 »	2 »
Լեզվաբանություն	հայերենով	2 »	2 »
Ոճաբանություն	»	2 »	-
Բառագիտություն	»	2 »	-
Գրականություն	պարսկերենով	2 »	2 միավոր
գումար՝		20 միավոր	20միավոր

Գ. լսարան

	լեզու	Ա. կիսամյակ	Բ. կիսամյակ
Հայերեն քերականություն		2 միավոր	2 միավոր
Գրաբար		2 »	2 »
Լեզվաբանություն		2 »	2 »

Մշակույթի պատմություն		2 »	2 »
Անգլերեն		2 »	2 »
Գրականություն	պարսկերենով	2 »	2 »
Պահլավերեն		2 »	2 »
Հայ գրականություն	պարսկերենով	2 »	2 »
Գրական վերլուծություն		2 »	-
գումար՝		18 միավոր	16 միավոր

Դ. լսարան

	լեզու	Ա. կիսամյակ	Բ. կիսամյակ
Հայ հին գրականություն		2 միավոր	2 միավոր
Ժարսկ. գրականություն		2 »	2 »
Անգլերեն		2 »	2 »
Գրական վերլուծություն	հայերենով	2 »	2 »
Հայոց մշակույթի պատմություն		2 »	2 »
Հայոց պատմություն		2 »	2 »
Հայոց գրականություն	պարսկերենով	2 »	2 »
Թարգմանություն	հայ.-պարսկ.	2 »	-
Գրաբար(ըստ ցանկության)		2 »	-
գումար՝		18 միավոր	14 միավոր

Ավարտաճառն (ատենախոսություն) ունի 4 միավոր, որը պետք է ավելացնել նաեւ վերջին տարվա Բ. կիսամյակի միավորների վրա[9]։

Ուսանողները չորս տարվա իրենց ուսման դասընթացը վերջացնելուց հետո ստանում են լիսանսի (բակալավրի) աստիճան։ Այդ լիսանսը ճանաչվում է պետության կողմից, բայց կրթական նախարարությունը մինչեւ այժմ ոչ մի ընթացավարտ ուսանողի (հայագիտական բաժնից) չի վարձել, հակառակ եղած դիմումների, առարկելով, որ հայերեն լեզուն Իրանի դպրոցների ծրագրի մեջ չկա եւ դասավանդվում է միայն հայկական ազգային դպրոցներում։

Սպահանի հայագիտական բաժնի բացման եւ ընթացիկ աշխատանքների մեջ մեծ երախտիք ունի դոքտ. Ա. Ֆարուղին, որ հյուրաբար եղել է նաեւ Երեւանում։ Նրա Սպահանից հեռանալով հայերենի բաժինը մեծապես տուժեց, բայց չփակվեց, որովհետեւ այդ

---

[9] - Լ. Գ. Մինասյան. Նշվ. աշխ., էջ 9-11։

համալսարանի ընդհանուր տնորեն (ռեկտոր) դոքտ. Մոթամիդին հայերենի ուսուցման հանդեպ բարյացակամ վերաբերմունք ուներ։

Սպահանի հայագիտական բաժնի գլխավոր մտահոգությունը եղել է մասնագետ դասատուների կամ հայագետների պակասը։ Փաստորեն հայերենի դասավանդումը կատարվել է այնպիսի անձնավորությունների կողմից, որոնց հայերենի գիտությունը հազիվ կարող է բավարարել տարրական եւ կամ միջնակարգ դպրոցներում հայերեն լեզվի ուսուցմանը։ Հայերենի ուսուցման մակարդակը կարող է բարձրանալ միայն այն դեպքում, երբ գործը հանձնվի մասնագետ դասախոսների, նման անձանց թիվը Իրանում շատ սահմանափակ է[10]։

Սպահանի համալսարանի հայագիտական բաժնի ուսանողության գերակշռող մասը կազմում են Թեհրանի եւ կամ Իրանի այլ քաղաքների ազգային միջնակարգ դպրոցների հայ ընթացավարտները։ 1969 *տարվա ուսանողության թիվը հասնում էր* 78 *հոգու (բոլոր դասարաններում միասին)։*

Պրոֆ. Հով. Հախնազարյանը հայոց դասախոսների մասին՝ ժամանակին գրել է.

Դոկտոր Հովհաննես Հախնազարյան

> *«Ընթացավարտներից օրիորդ Ռոզի Ալեքսանյանը Գյուլպենկյան հիմնարկության նյութական օժանդակությամբ ուսանել է Փարիզում, պրոֆ. Ֆեյդիի մոտ։ Կրկին Ն. Ջուղա*

---

[10] - *ՊԲՀ*. 1969, No 3, *էջ* 263։

> վերադառնալով, նա դասավանդում է հայագիտական բաժնում՝ որպես հայոց գրականության եւ լեզվի դասախոս: Ներկայումս երեք ուրիշ ուսանողներ (մեկը միայն միջնակարգ դպրոցների ընթացավարտ, երկուսը՝ Իսպահանի համալսարանի հայագիտական բաժնի ընթացավարտ) ուսանում են նույնպես պրոֆ. Նեյդիի մոտ: Մեր կարծիքով, սակայն, հայագիտության լրիվ դասընթաց նրանք կարող էին ուսանել Երեւանի համալսարանի հայագիտական բաժանում: Փարիզը չի կարող տալ այն, ինչ Երեւանի համալսարնը:
>
> Սպահանի համալսարանի գրական ֆակուլտետն Գ. Գյուլպենկյան հաստատությունից 5 հազար դոլար ստացավ՝ հայագիտական գրադարան հիմնելու համար: Ուսանողները կարող են օգտվել նաեւ Ն. Ջուղայի վանքի հայկական գրադարանից: Դրանով հանդերձ գրական ֆակուլտեի ուսանողությունը եւ դասատուները մեծապես կարիք ունեն Հայաստանում նախկինում եւ այժմ հրատարակվող, ինչպես նաեւ հետագայում հրատարակվելիք հայագիտական, գրական, պատմական հրատարակությունների: Ուսանողությունը միայն այդ նոր ուսումնասիրությունների ընթերցանությամբ կարող է լրացնել իր գիտական թերին:
>
> Հատկապես անհարժեշտ են մեծ հայագետներ Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Ս. Մալխասյանի, ինչպես նաեւ Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի, Ա. Ղանալանյանի եւ այլ նշանավոր բանասերների եւ հայագետների ուսումնասիրությունները՝ ոչ միայն Սպահանի, այլ նաեւ Թեհրանի պետական համալսարանի հայագիտական բաժնի համար: Անչափ կարեւոր է լեզվաբանական, պատմագիտական եւ այլ հանդեսների եւ ամսագրերի կանոնավոր առաքումը: Շատ անհրաժեշտ է նաեւ օրաթերթերի ու շաբաթաթերթերի առաքումը»[11]:

Հայերենագիտական ճյուղի ստեղծումը, թեեւ իրանհայ համայնքին պատճառեց ցնծություն, սակայն ցավոք ուներ աներեւակայելի կողմեր եւս: Երկրի ղեկավար Շահի հրամանագրով Սպահանի պետական համալսարանում ստեղծվում է հայկական բաժին, սակայն բավարար պետական գումար չի հատկացվում նրա կազմակերպման եւ ընթացիկ աշխատանքների համար, քանի որ Իրանա-Հնդկաստանի Հայոց Թեմական Խորհուրդը դիմում է հայ համայնքին հայցելով նյութական-դրամական օժանդակության[12]:

---

[11] - ՊԲՀ. 1969թ., համար 3, էջ 263-264:
[12] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 6-7:

Իսկ ինչպես նշեցինք, համալսարանի հայկական ճյուղի ընթացավարտներն չէին ընդունվում պետական պատկան հաստատություններում, նրանց աշխատանքի ընդունումն ու վարձատրելու հարցերը թողնելով հայ համայնքին։ Հայկական բաժանմունքի պատկան ծախսերի հոգումը մեծապես ստանձեց նաեւ Գալուստ Գուլբենկյան հիմնարկությունը։

Առաջին շուրջ հինգ տարիների ընթացքում Թեմական Խորհրդի կողմից համալսարանի ծախսերի դիմաց վճարվել է տարեկան 100,000 ռիալ, որի կեսն ստացվել է Թեհրանի Թեմական Խորհրդից։ Այս վճարված կլոր գումարից բացի, եղել են այլ անմիջական ծախսեր, որոնք վճարվել են Ժամանակավոր Հանձնախմբի կողմից։

1960-61 տարեշրջանի ծախսերի ընդհանուր գումարն եղել է 123,451 ռիալ, որից Ն. Ջ. Ազգային Մարմինների կողմից վճարվել է 39,000 ռիալ, ժամանակավոր Հանձնախմբի կողմից 19,451 ռիալ, Թեհրանի Թեմական Խորհրդի կողմից 35,500 ռիալ, բաց՝ 32,500 ռիալ։

1961-62 տարեշրջանի ծախսն եղել է 132,500 ռիալ, որից համալսարանին վճարվել է 100,000 ռիալ (50,000 վճաարել է Թեհրանի Թեմական Խորհուրդը)։

Համալսարանի հայոց լեզվի ճյուղին իրենց օժանդակությունն են բերել նաեւ Իրանա-Հնդկաստանի թեմի մյուս շրջանները

Հմալսարաանի հայ ուսանողներին նպաստել են Թեհրանի եւ Իրանա-Հնդկաստանի Թեմերի թեմական խորհուրդները, իսկ այժմ նպաստում են Գալուստ Գյուլբենկյան Հիմնարկությունը եւ Թեհրանի «Հայ կին» Միությունը։

1969-70 տարեշրջանում Գյուլբենկյան հիմնարկությունը համալսարանի գետնի վրա հայերեն լեզվի ճյուղի համար մի առանձին շենք կառուցելու առթիվ հատկացրել է 25,000 դոլար։ Եղած պակաս գումարները կրկին 25,000 դոլարով լրացվեց նույն Հիմնարկության կողմից[13]։

Եթե Հայագիտական ճյուղի առաջին ուսանուղները եղել էին միայն հայերը, սակայն ժամանակի ընթացքում նրանք զիջելով ոչ-հայ ուսանողներին, այսօր համարյա այդ ճյուղում չի սովորում որեւէ հայ։ Նաեւ հարկ է նշել որ Հայաստանի անկախությունից հետո Հրաչյա Աճառյան համալսարանի եւ իսլամական Ազատ համալսարանների համագործակցության շրջանակում, Թեհրանում հիմնադրվեց հայկական բաժին եւ Թեհրանից եկող ուսանողները բնականաբար նախընտրեցին հաճախել այդ իրենց քաղաքում գտնվող համալսարանը։

Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնը ուներ հետեւյալ նպատակները.

---

[13] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 7-8։

ա) Իրանում ծառայել որպես հայագիտական ուսումնասիրությունների մի կենտրոն.

բ) Նկատվել էր, որ անգլերեն, արաբերեն եւ ֆրանսերեն լեզուների կողքին, թեպետ ոչ նույն ծավալով, անհրաժեշտ էին երկրին, նաեւ հայոց լեզվին եւ գրականության ծանոթ ու քաջատեղյակ անձինք.

գ) Հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների պատրաստում.[14]

Գնահատելով Սպահանի համալսարանի հայագիտական մասնաճյուղը, հարկ է նշել որ հիմնադրված օրվանից նրան չհաջողվեց դաստիարակել պատշաճ մակարդակով հայագետներ, որի իսկական պատճառը մասնագետ դասախոսների պակասն էր. Ցավոք «սառը պատերազմի» հետեւանքով համալսարանի պատասխանատուները չկարողացան եւ գուցե չցանկացան հմուտ հայագետներ հրավիրել աշխարհի հայագիտության կենտրոն Խորհրդային Հայաստանից, նույնիսկ Հայաստանի անկախությունից հետո եւս տեղի չունեցավ այս շատ կարեւոր հանգամանքը. Համալսարանը նախընտրեց մնալ իր սահմանափակ շրջանակներում[15], իր ոչ բավարար աղբյուրներով, որի արդյունքը եղավ այն որ արդեն նշեցինք, 1960թվականից մինչեւ 2010թ. ամբողջ 50 տարիների ընթացքում քանի՞ գիտական որակյալ հետազոտություն, ատենախոսություն է հրատարկել հայկական ամբիոնը, նրա ընթացավարտներից քանի՞սն են բացի ուսուցչությունից գոնե սիրողական կարգով զբաղվել հայագիտությամբ, քանի՞ հասարակ հոդվածներ են գրվել այդ համալսարանի չորս պատերի շրջանակում եւ ապա նրանցից դուրս, հայկական ամբիոնի ընթացավարտները ի՞նչ դեր ունեցան երկրի մակարդակով, (երկրորդ նպատակը)։ Կան այսպիսի հարցադրումների շարան։

Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնը մնաց դպրոցական ուսուցիչներ պատրաստելու մակարդակում, մինչ հասավ այն օրը, որ հայ ուսանողի չգոյության պատճառով, այլեւս ի զորու չէ նույնիսկ հայոց դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու պարտականությամբ զբաղվել, քանի որ պարսիկ ընթեցավարտը չի ընդգրկվելու հայոց դպրոցում։

---

[14] - Դոկտ. Մեսրոպ Բալայան. Սպահանի պետական համալսարանի հայագիտական ճյուղը. Ալիք. 1989թ., մախսի3։

[15] - Ալիք. 1972թ., նույեմբեր 25։

Հայաստան-Իրանի Իսլամական Հանրապետություն մշակութային փոխհարաբերությունները 1992-2013թթ.

1991թ. դեկտեմբերին, Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Հարավային Կովկասի ու Միջին Ասիայի հանրապետություններն անկախացան, երկու հարեւան երկրներին՝ Իրանին եւ Հայաստանին, նոր հնարվորություն ընձեռվեց վաղեմի -կապերը վերականգնելու եւ ամրապնդելու համար: Երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո փոխհարաբերությունները տարբեր ոլորտներում, այդ թվում՝ մշակույթի, օրըստօրե ընդլայնվում են, ինչը մեծապես պայմանավորված է նրանց պատմամշակութային եւ ծագումնաբանական ընդհանրություններով: Հայ-իրանական մշակութային փոխառնչությունները հազարամյակների ընթացքում, կարելի է ասել, երբեւէ չեն ընդհատվել: Անգամ այն դեպքերում, երբ բացակայել են դիվանագիտական փոխհարաբերությունները, մշակութային կապերը ոչ թե ընհատվել, այլ սահմանափակվել են: Ահավասիկ, Խորհրդային 70-ամյա իշխանության ժամանակահատվածում երկու բարեկամ ժողովուրդների միջեւ մշակութային փոխառնչությունները, անմիջական կապի բացակայության պայմաններում, նվազագույնի էին հասել: Իրանում հայ մշակույթի հետ շփումները խիստ սահմանափակվել եւ հիմնականում իրականացվում էին ավելի քան 300-ամյա հայ համայնքի հետ շարունակվող առնչություններով: Բացի այդ, երբեմն պարսկերեն էին թարգմանվում գրական ստեղծագործություններ, այդ թվում՝ Ահմադ Նուրիզադեի կազմած «Մեկդարյա հայ չափածոն» ժողովածուն, որտեղ զետեղված են 20-րդ դարի հայ գրականության լավագույն ստեղծագործությունները: Իսկ հայ հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով իրանցի հանրաճանաչ բանաստեղծներ Ա. Սայեն (Հուշանգ Էբթեհաջ) եւ Նադեր Նադերփուրն իրանահայ բանաստեղծներ Գալուստ Խանենցի եւ Ռուբեն Հովհաննիսյանի օգնությամբ թարգմանել են Թումանյանի բանաստեղծությունների «Հոբելյանական» փոքրիկ ժողովածու[16]: Արդի գրականության խոշոր դեմքերից բանաստեղծ Ահամդ Շամլուն կնոջ՝ հայուհի Աիդա Սարգսյանի աջակցությամբ թարգմանել է Եղիշե Չարենցի«Ամբոխները խելագարված» պոեմը[17]:

---

[16] Երկլեզու, երշաբաթյա Հույս պարբերական, 106 համար, 2011թ. Թեհրան, էջ 9:

[17] Ռոբերտ Մարքարյան, Հայ-իրանական գրական փոխառնչությունները, մշակութային պարսկալեզու«Պայման» եռամսյա պարբերական, համար 41, 2008թ.:

1960թ. Սպահանի համալսարանում բացվեց հայոց լեզվի ու գրականության ամբիոն, իսկ 1967թ.՝ Թեհրանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի ջանքերով՝ արդի հայերենի եւ գրաբարի ամբիոն, որտեղ ուսումնասիրվում էին նաեւ հայերենի եւ պարսկերենի միջեւ կապն ու ընդհանրությունները: Սա եւս կարելի է համարել որպես հայագիտության ասպարեզում իրականացված կարեւոր քայլ: Նշենք, որ առ այսօր Սպահանի Համալսարանում հայագիտական ամբիոնը գործում է, սակայն Թերհանինը հետագայում փակվեց: Մյուս կողմից, Հայաստանում իրանագիտությունը բավական բարձր մակարդակի վրա է եղել, համարվել է Խորհրդային Միության լավագույն դպրոցներից: Հայաստանի գիտությունների ակադեմիայում 1971թ. հիմնադրված Արեւելագիտության ինստիտուտի գիտնականները լուրջ ուսումնասիրություններ են կատարել Իրանի պատմության ու գրականության ոլորտներում: 1969թ. Երեւանի Պետական համալսրանում բացվել է արեւելագիտության ֆակուլտետ, որի կարեւոր ամբիոններից էր իրանագտիականը: Այն դարձավ իրանագետների պատրաստման նոր դարբնոց: Իսկ 1980-ից Երեւանում գործել է պարսկերեն թեքումով 59-րդ դպրոցը: Ըստ երեւույթին հենց վերոհիշյալ հանգամանքներն է նկատի ունեցել«Հայ-իրանական գրական եւ մշակութային ընդհանրությունները» հոդվածի հեղինակ Սոլեյման Մոխթարին՝ շեշտելով.«Իրան-Հայաստան բարեկամական եւ մշակութային փոխհարաբերությունները հազարամյակների ընթացքում երբեք չեն ընդհատվել, նույնիսկ եթե նրանց միջեւ խզվել են քաղաքական կապերը: Իրանագիտության եւ հայ-իրանական կապերի վերաբերյալ Հայաստանում առկա բազմաթիվ գրքերն ու գիտական հոդվածները, ինչպես նաեւ թարգմանված գրականությունը, ասվածի խոսուն վկաներն են»:[18]

Հայ-իրանական մշակութային 20-ամյա գործակցության կարեւոր ուղղությունները

1992թ. սկզբներին, երբ արդեն երկու հարեւան երկրների միջեւ դիվանագիտական կապեր հաստատվեցին, քաղաքական եւ տնտեսական փոխհարաբերություններին զուգահեռ, մշակույթի տարբեր ոլորտներում փոխառնչությունները,մասնավորապես ներքոհիշյալ ասպարեզներում, բուռն զարգացում արձանագրեցին: Դրանք են.

---

[18] Սոլեյման Մոխթարի, Հայ-իրանական գրական եւ մշակութային ընդհանրությունները, «Քեյհան» օրաթերթ, 13 հուլիսի, 2010թ.:

1. Մշակույթի ոլորտում համագործակցության համաձայնագրերի մշակում, ստորագրում եւ իրականացում:
2. Մշակութային եւ գիտական պատվիրակությունների փոխայցելություններ:
3. Հայերեն եւ պարսկերեն լեզուների փոխադարձ տարածում եւ զարգացում:
4. Համալսարանական եւ գիտական գործակցություններ:
5. Հայկական գիտական կենտրոններում իրանագիտական հետազոտություններ:
6. Մշակույթի ու գիտության ոլորտի երկերի թարգմանություն եւ հրատարակում:
7. Գիտական սեմինարների անցկացում:
8. Զբոսաշրջության ոլորտի գործակցություններ:
9. Բուհական տարբեր հաստատություններում եւ Կապույտ մզկիթում գրադարանների ստեղծում ու համալրում նոր գրքերով:
10. ԶԼՄ-ների համագործակցություն:
11. Գործակցություն Սպորտի ոլորտում:[19]

Հավելենք նաեւ, որ Հայաստանում ԻԻՀ դեսպանության մշակութային գործունեության ծրագրում ի սկզբանե կարեւորվել է գիտական, մշակութային, հետազոտական կենտրոնների հետ ծանոթացումը եւ մշակութային կենտրոնների ու ընկերությունների ստեղծումը: Հենց այդ շրջանակներում էլ 2000թ.մի շարք հայ մտավորականների մասնակցությամբ հիմնադրվել է հայ-իրանական մշակութային «Միհր» ակումբը, որը լույս է ընծայում համանուն երկամսյա պարբերականը: Իսկ 2005թ. նույն սկզբունքներով հիմադրվեց «Պարսկերն լեզվի ու գրականության համակիրների» ակումբը, որն սկսեց հրատարակել «Փարսիան» պարսկալեզու պարբերականը, սակայն 5-րդ համարից հետո՝ 2008-ից, դարձել է երկլեզու, ինչը հայ ընթերցողին հնարավորություն է ընձեռել ծանոթանալ իրանական գրականությանն ու մշակույթին, քանզի դրանում փոխադարձաբար զետեղվում են հայ եւ իրանցի գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունները եւ մշակույթին վերաբերող հոդվածներ:

1999թ. հիմնադրվել է ԻԻՀ դեսպանությանը կից միակույթի կենտրոնը, որն էլ թերեւս երկու երկրների միջեւ մշակույթի ոլորտում ստորագրված համաձայնագրերի եւ իր իսկ նախաձեռնությամբ մշակված ծրագրերի իրականացնողի եւ կոորդինատորի դեր է կատարում՝ կազմակերպելով մշակույթի միջոցառումներ եւ տարբեր ոլորտներում գոծակցության ծրագրեր:

---

[19] ԱԳ նախարարության Կանաչ գիրք մատենաշար,«Հայաստան» Թեհրան, 2009թ., էջ՝ 171:

Մշակութային համաձայնագրերի մշակում, ստորագրում եւ իրագործում

Ընդհանուր առմամբ երկու երկրների մշակութային փոխհարաբերությունները կարգավորվում են կողմերի միջեւ ստորագրված պաշտոնական համաձայնագրերով, որոնք ուղեցույց եւ գործունեության ծրագիր են համարվում համագործակցության եւ մշակութային փոխառնչությունների զարգացումն իրականացնողների համար: Երկու երկրների միջեւ առաջին համաձայնագիրն ստորագրվել է 1993թ., ինչի հիման վրա մշակվել եւ նախագծվել են մշակույթի ոլորտի պաշտոնյաների փոխայցելություններ:[20] Այդ շրջանակներում տեղի են ունցել բազմաթիվ բարձաստիճան պատվիրակությունների փոխայցելություններ: 2007թ. նոյեմբերին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորած պատվիրակության այցն Իրան, այդ մակարդակի առաջին այցելությունն էր: Նոյեմբերի 3-ին Իրանի այդ ժամանակի Մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Մոհամեդ Հոսեյն Սաֆար Հարանդիի հետ հանդիպմանը քննարկվել է մշակութային փոխհարաբերությունների հարցը: Սաֆար Հարանդին, խիստ կարեւոելով մշակութային փոխառնչությունները, նշել էր, թե դրանց մակարդակը զիջում է քաղաքական ու տնտեսական փոխահրաբերություններին: Միաժամանակ ընդգծել, որ դրանք երաշխիք են տարբեր երկրների միջեւ քաղաքական ու տնտեսական կապերի համար: ՀՀ մշակույթի նախարարը, անդրադառնալով մշակույթի տարբեր, այդ թվում՝ թատրոնի, կինոյի գրադարանների եւ պատմական հուշարձանների պահպանման ոլորտներում գործակցությունների կարեւորությանը, նշել էր, թե մշակույթի ու արվեստի ասպարեզներում փառատոների կազմակերպումը, ինչպես նաեւ փոխադարձաբար ԻԻՀ-ի եւ ՀՀ-ի ազգային օրերի անցկացումն, զգալիորեն կնպաստի մշակութային կապերի ընդլայնմանը[21]: 2012թ. նոյեմբերին Իրանի Մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամեդ Հոսեյնիի հրավերով ՀՀ մշակույթի նախարարը կրկին Թեհրանում էր: Նոյեմբերի 13-ին, նախարարների հանդիպմանը կողմերը երկու երկրների մշակութային փոխհարաբերությունները գոհացուցիչ գնահատելով, միաժամանակ շեշտել են, որ անելիքները դեռեւս շատ են: Տիկ. Պողոսյանն անդարադարձել է նաեւ 2012թ. Երեւանը UNESCO-ի կողմից գրքի մայրաքաղաք հռչակվելու հարցին, կարեւորել այդ շրջանակներում երկու երկրների մշակութային փոխառնչությունների 20-ամյակին նվիրված համաժողովի անցակացումը եւ բարձր է գնահատել իրանական կողմի, մասնավորապես մշակույթի կենտրոնի համամագործակցությունը[22]: Իսկ 2013թ. ապրիլին, հանձին Սեյեդ Մոհամեդ Հոսեյնիի, առաջին անգամ Հայաստանի Հանրապետություն է ժամանել ԻԻՀ մշակույթի եւ իսլմական առաջնորդման նախարարը:

---

[20] Լ. Մեքումյան, Հայաստան-Իրան փոխառնչություններ ու փոխազդեցություններ, Թեհրան, 2000թ., էջ 68:
[21] «Մեհր» լրատվական գործակալություն, 3 նոյեմբերի, 2007թ.

Ապրիլի 19-ին ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Հասմիկ Պողոսյանի հետ հանդիպմանը, խոսելով երկու երկրների միջեւ առկա պատմամշակութային ընդհանրությունների մասին, կողմերը շեշտել են մշակութային գործակցությունների ընդլայնման անհրաժեշտությունը: Հանդիպմանը նրանք ստորագրել են «ՀՀ մշակույթի եւ ԻԻՀ- մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարարության միջեւ 2013-2016թթ. մշակույթի եւ արվեստի բնագավառներում համագործակցության» գործնական ծրագրի վերաբերյալ փաստաթուղթ, այդ թվում՝ փոխադարձ մշակույթի օրերի, ցուցահանդեսների եւ համատեղ համաժողովների կազմակերպում, միջգրադարանային ու միջթանգարանային գործակցություն եւ այլն:[23] Այդօրինակ բարձր մակարդակի փոխայցելությունները եւ համագործակցության պայմանավորվածությունները խոսում են կողմերի՝ մշակութային փոխառնչությունների կարեւորման մասին:

Մշակույթի տարբեր ոլորտներում գործակցության նպատակներով ՀՀ-ի եւ ԻԻՀ-ի պետական տաբեր կառույցների միջեւ ստորագրվել են ավելի քան մեկ 10-յակ համաձայնագրեր: Օրինակ,Հայյստանի Հանրապետության եւ Իրանի Իսլմական Հանրապետության կառավարությունների միջեւ գիտա-ուսումնական եւ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության փոխըմբռման հուշագիր եւ 2003-2006թթ. համար գործնական ծրագիր[24]:

2005թ. հունվարի 31-ին փոխըմբռման համաձայնագիր է կնքվել Հայաստանի Հանրային ռադիոհեռուստատեության խորհրդի եւ ԻԻՀ-ի ռադիոհեռուտատեսության(Ձայն եւ պատկեր) կազմակերպության միջեւ: Իսկ 2006թ. ապրիլին 20-ին նշյալ կառույցների միջեւ համագործակցության գործնական ծրագիր է ստորագրվել լրատվական ոլորտում:

2010-12թթ. համար համագործակցության գործնական ծրագիր է ստորագրվելՀՀ մշակույթի նախարարության եւ ԻԻՀ մշակույթի եւ իսլամական կապերի կազմակերպության միջեւ[25], իսկ 2005-2008թթ.՝

---

[22] ISNA լրատվական գործակալություն, 13 նոյեմբերի, 2012թ.:
[23] Իրանի կառավարության լրատվական կայք՝ www.dolat.ir:
[24] ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի զեկույցների բյուլետեն, 2003թ.:
[25] ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի զեկույցների բյուլետեն, 2010թ.

ԻԻՀ-ի կրթության եւ ՀՀ-ի գիտության ու կրթության նախարարությունների միջեւ ուսումնական ոլորտում համագործակցության հուշագիր:

Փոխադարձ մշակութային օրերի անցկացում

Երկու երկրների միջեւ մշակութային համագործակցության շրջանակներում առանցքային են փոխադարձաբար մշակույթի, արվեստի օրերի անցկացումը, որոնք տեղի են ունենում տարվա ընթացքում, տարբեր կարեւոր առիթներով: Օրինակ, Իրանի իսլամական հեղափոխության տարելիցի՝ «Այգաբացի տասնօրյակի» տոնակատարությունների շրջանակներում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում անցկացվող մշակույթի օրերը: Այդ օրերը լավագույն առիթ են երկու ժողովուրդներին միմյանց մշակույթներին ծանոթացնելու համար: Բացի այդ, մշակութային միջոցառումներ կազմակերպելու առիթ է հանդիսանում նաեւ Նոուռուզը . Իրանից հրավիրվում են երաժշտական տարբեր համույթներ: «Այգաբացի տասնօրյակին» Իրանում կազմակերպվող բազմաթիվ ու բազմաբնույթ մարզամշակութային փառատոներին ու մրցույթներին ակտիվորեն մասնակցում են նաեւ հայ մարզիկներն ու արվեստի գործիչները:

Փոխադարձաբար Իրան են այցելում նաեւ Հայաստանի երաժշտական եւ թատերական տարբեր խմբեր, կազմակերպվում են ցուցահանդեսներ: Այդօրինակ միջոցառումները համարվում են երկու երկրների միջեւ բարեկամության կամրջի առանցքներից: Հայաստանի եւ Իրանի կառավարությունները լավագույնս աջակցում են այդ միջոցառումներին, ինչը, կարելի է ասել, աննախադեպ է տարածաշրջանում:

Փոխադարձաբար հայերենի եւ պարսկերենի ուսուցումն Իրանում եւ Հայաստանում

1992թ. փետրվարին Երեւանում բացվեց Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունը, որի մշակույթի ոլորտի գործունեության հիմնասյունը դարձավ պարսից լեզվի տարածումը, արձանագրելով լուրջ հաջողություններ, ինչը Լ. Մելքոմյանը պայմանավորում է նաեւ հայկական կողմի՝ գիտական ու կառավարական շրջանակների բարյացակամ եւ նպաստավոր դիրքորոշմամբ:[26] Գործադրված ջանքերի շնորհիվ Երեւանում ու այլ քաղաքներում աստիճանաբար մեծացել է այն դպրոցների ու բուհերի թիվը, որտեղ դասավանդվում է նաեւ պարսից լեզու: Այսօր արդեն Հայաստանի տարբեր քաղաքների շուրջ15 դպրոցում, որպես օտար լեզու դասավանդվում է պարսկերենը: Երեւանի Պետական Համալսարանի արեւելագիտական ֆակուլտետից զատ,պարսկերեն լեզու է դասավանդվում նաեւ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, Բրյուսովի անվան օտար լեզուների եւ Լազարյան համալսարաններում: Բացի այդ, 2001-ից Իրանի դեսպանության Մշակույթի կենտրոնի գլխավորությամբ պարսկերեն լեզու է ուսուցանվում նաեւ Երեւանի Կապույտ մզկիթում: Մելքոմյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2000թ. Հայաստանում տարբեր մակարդակներում պարսկերեն էր սովորում ավելի քան հազար մարդ[27]:

---

[26] Լ. Մելքոմյան, Հայաստան-Իրան փոխառնչություններ ու փոխազդեցություններ, Թեհրան, 2000թ., էջ 68:

Փաստորեն ՀՀ-ում պարսկերեն սովորել ցանկացողների թիվը, Տաջիկստանից հետո, ԱՊՀ երկրներում երկրորդ տեղում է, ինչը խոսում է պարսկերենի նկատմամբ հայերի համակրանքի մասին:

Ինչ վերաբերում Իրանում հայոց լեզվի ու գրականության ուսուցմանը, ապա Սպահանի Համալսարանի հայագիտական ամբիոնից զատ, 1994-95թթ. ուստարվանից սկսած, Իրանի ոչ պետական Իսլմական ազատ համալսարանի Թեհրանի մասնաճյուղում բացվել է հայոց լեզվի ու գրականության ամբիոն: Այն բացվել է Երեւանում վերոհիշյալ եւ Հրաչյա Աճառյանի անվան համալսարանների հետ ստորագրված համագործակցության շրջանակներում: Միաժամանակ ՀՀ-ի նշյալ համալսարանում բացվել էր պարսից լեզվի ու գրականության ամբիոն: Իսկ 2013թ. Թեհրանի Համալսարանի օտար լեզուների ուսուցման կենտրոնում, որտեղ ուսուցանվում են շուրջ 20 տարբեր լեզուներ, բացվել են նաեւ հայոց լեզի ուսուցման դասընթացներ՝ երեք մակարդակով, որտեղ դասավանդում են հայաստանցի մասնագետներ:

Գիտական եւ մշակութային գրականության թարգմանություններ

Անդրադառնալով հայերեն եւ պարսկերեն գրական ստեղծագործությունների ու գիտական գրքերի փոխադարձ թարգմանությունների հարցին, կարելի է նշել, որ այն վերջին 20 տարիներին բուռն զարգացում է արձանագրել: 1994թ. ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող , Իրանի գրականության մասնագետ Հրայր Մովսիսյանը հայերեն է թարգմանել Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ Էմամ Խոմեյինիի գազելների «Սիրո գինին» ժողովածուն, իսկ 1995թ. դոկ. Արմանուշ Կոզմոյանի եւ հայ մեծանուն բանաստեղծ Վահագն Դավթյանի համագործակցությամբ թարգմանվել է Ռուդաքիի ստագծագործությունների ժողովածուն: Մշակույթի կենտրոնի հիմնադրումից ի վեր, վերջինիս աջակցությամբ, ավելի քան 40 անուն գեղարվեստական` դասական ու ժամանկակից, գիտական եւ կրոնական գրքեր են թարգմավել պարսկերենից հայերեն, ինչը քանակի առումով թերեւս աննախադեպ է:

---

[27] Նույն տեղում:

Հայաստանի անկախանալուց եւ հայ-իրանական մշակութային փոխհարաբերությունների ձեւավորումից հետո, մեծ թափ է ստացել նաեւ հայ գեղարվեստական ստեղծագործությունների ու պատմության գրքերի թարգմանությունը պարսկերեն: Այդ առնչությամբ իր պատվավոր տեղն ունի Ահմադ Նուրի Զադեն, ով խնդրո առարկա ժամանակահատվածում թարգմանել ու կազմել է «Հայոց մշակույթի եւ պատմության» ծավալուն գիրքը, «Խնձորի Այգին» խորագրով հայ դասական արձակագիրներից 23 պատմվածք եւ այլն: Բացի այդ, նա նախահեղափոխական շրջանում եւս թարգմանել է հայ բանաստեղծներին «Հարյուր տարվա հայ չափածո» ժողովածուն, որտեղ ընդգրկված են հայ դասակաները: Հայերենից թարգմանված գրականության հեղինակները գլխավորապես իրանահայեր են: Այս ոլորտի առյուծի բաժին ընկնում է Էդիկ Բաղդասարյանին: Նա թարգմանել է` 5-րդ դարի պատմիչներ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ղազար Փարպեցու «Պատմությունը», 1981-82թթ. թարգմանել է «Հայ ժողովրդի պատմություն» եռահատորը: Նույն թվականներին միաժամանակ թարգմանել է նաեւ «Հայ մշկույթի նշանավոր գործիչներ» գիրքը, իսկ 2014թ`. «Հայր գրականության ընտրանին», որի մեջ ընդգրկված են 20-իդ դարի հայ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործություններ եւ այլն:

Ազատ Մաթյանը թարգմանել է Գրիգոր Նարեկացու«Մատյան ողբերգությունը», Գարուն Սարգսյանը` հիմնականում պատմական նյութեր , որոնք իրանցի պատմաբանների համար արժեքավոր աղբյուր են: Բանաստեղծներ Վարնադն ու Վահե Արմանը պարսկերեն են թարգմանել հայ բանաստեղծների, իսկ Անդրանիկ Խեչումյանը` հայ դրամատուրգների գործերից[28]: Էմմա Բեգիջանյանը պարսկերեն է թարգմանել հայ ժամանակակից 16 արձագակիրների 22 պատմվածքների «Ծիածան» ժողովածուն: Գեղարվեստական ոլորտի փոխադարձ թարգմանություններին նպաստում է նաեւ ՀՀ եւ ԻԻՀ-ի գրողների միությունների միջեւ ստեղծված «գրական կամուրջը», որի շրջանակներում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ եւ փոխայցելություններ:

---

[28] Ռոբերտ Մարքարյան, Հայ-իրանական գրական փոխառնչությունները, մշակութային պարսկալեզու«Պայման» եռամսյա պարբերական, համար 41, 2008թ.:

ԻԻՀ-ի մշակութային համագործակցությունների Կոորդինացման գլխավոր վարչության փաստաթղթերի արխիվում 1992թ. մինչեւ 2003թ. ՀՀ-ի հետ գործակցության եւ մշակութային փոխառնչությունների վերաբերյալ առկա է 240 փաստաթուղթ, որի 50 տոկոսը վերաբերում է գիտական եւ ուսումնական ոլորտներին, 50 տոկոսը՝ արվեստին, սպորտին, պատմական հուշարձանների վերանորոգմանը, տարբեր բնույթի ցուցահանդեսների, սեմինարների ու մշակութային օրերի կազմակերպանը:[29]

Բացի այդ, երկու երկրների միջեւ ձեւավորվել է գրադարաններին գիրք նվիրելու գեղեցիկ ավանդույթ: Հաշվի առնելով Մշակույթի եւ իսլամական կապերի կազմակերպության ծրագրերը, հայաստանյան բուհերում իրանական կաբինետներ ստեղծելու հարցում, հուսով ենք, որ առաջիկայում էլ ավելի լուրջ քայլեր կարվեն թարգմանությունների ու գիտական կապերի ընդլայնման ուղղությամբ[30]:

Իրանցիների եւ հայերի միջեւ աշխարհագրական, պատմական եւ մշակութային ընդհանրություններն այն աստիճան խորն ու ընդգրկուն են, որ կրոնական տարբերությունն աչքի չի զարնվում: Ավելին, կարելի է հստակ նշել, որ մշակութային առումով Հայաստանը տարածաշրջանում Իրանին ամենամոտն է: Հավելենք նաեւ, որ մշակութային փոխհարաբերությունների զարգացման ու ընդլայնման հարցում երկու երկրների պետական կառույցներից զատ, իր ուրույն դերն է ունեցել նաեւ Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնը, որ շարունակում է իր արդյունավետ գործունեությունը:

Էմմա Բեգիջանյան,
ՀՀ-ում ԻԻՀ դեսպանութման մշակույթի նախկին խորհրդական՝
Մեհրան Շիրավանդ

---

[29] Լ. Մելքոմյան, Հայաստան-Իրան փոխառնչություններ ու փոխազդեցություններ, Թեհրան, 2000թ., էջ76-77:

[30] ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի զեկույցների բյուլետեն, 2011թ.:

A REIGN OF TERROR.

FROM TARTAR HUTS TO CONSTANTINOPLE PALACES.

CENTURIES OF OPPRESSION — MOSLEM AND CHRISTIAN — SULTAN AND PATRIARCH — BROKEN PLEDGES FOLLOWED BY MASSACRE AND OUTRAGE.

THE RED CROSS TO THE RESCUE.

BY THE
REV. EDWIN MUNSELL BLISS,
Late of Constantinople,
Editor of ENCYCLOPEDIA OF MISSIONS; Assistant Editor of THE INDEPENDENT,
ASSISTED BY
The REV. CYRUS HAMLIN, D. D., Founder of Robert College; PROF. E. A. GROSVENOR, of Amherst College; REV. BENJAMIN LABAREH, D. D., late of Persia, and Other Eminent Oriental Scholars; also Several Eye-Witnesses of the Massacres.

CHAPTER IV.

THE TURKS.

Their Origin — Early History — General Characteristics — Good Qualities — Kindness-Hospitality — Temperance — Honesty — Intellectual Ability — Obedience to Rulers — Bravery — Bad Characteristics — Indifference to Suffering — Brutality — Degradation of Women — Sensuality — Official Unreliability — Fatalism — Insolence — Indolence — General Summary.

THE term Turk is a somewhat indefinite one. In general it applies to any or all of the different tribes originating east of the Caspian, and who have spread in varying degrees north, south and west. Without undertaking to give specific definition, it is sufficient to apply the name to the greater part of the Turanian race, and for present purposes to limit it to those branches that have at various times occupied what is known as the Turkish Empire.

According to a legend, the common ancestor of all was a mighty king by the name of Turk, who lived in the time of Abraham. A descendant of his, called Oghuz Khan, had six sons, whom he sent one day to the chase. Returning, they brought him a bow and arrows which they had found. The bow was given to the three eldest and the three arrows to the younger. The latter each took one, but the first three divided the bow among them, receiving thereby the name Bosuk, The Breakers. They were intrusted with the care of the right

[page 67] TOGRUL BEY.

wing of his army, while to the three youngest, called Utschok, The Three Arrows, was given the care of the left wing. These younger ones extended their rule eastward toward China and were the ancestors of the Mongols. The others roamed westward. One became the founder of the Turkomans, another of the Seljuks and the third of the Ottomans or Osmanlis. This, however, is chiefly legend. What is clearer history is the fact that varying tribes, with some evident connection with the Mongols of Eastern Asia, spread westward through Russia and Persia, and encamped upon the plains of Mesopotamia and Asia Minor. Their first incursions were about the fifth and sixth centuries, at the very time when both Caliphate and Byzantine Empire were showing the weakness of effeminacy. At first their progress was, through lack of any organization and unity, of little moment. They furnished the mercenaries for the Caliphs, and while occasionally governing one section or another, held their power in very uncertain hands.

